# Արձանագրություն N 2
## <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/21>> ծածկագրով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.10.2017 թ.
ժ. 14:30

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Հովսեփյանը /գնահատող/, |
| | Օ. Կարապետյանը /գնահատող/, |
| | Գ. Խաչատրյանը /բացող/, |
| | Ա. Չավուշյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը: |
| Բացակայում է հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյանը. |

### 1. Նիստի նախագահող ընտրելու մասին
(Հ. Ավետիսյան)

1.1 Նիստի նախագահող ընտրել հանձնաժողովի անդամ Ա. Հովսեփյանին.
Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

### 2.Գնանշման հարցման ընթացակարգի հայտի բացման մասին
(Ա. Հովսեփյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա)

| Գնման առարկայի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Ընդհանուր գինը | 2017 թ. նախատեսված հատկացման չափը |
| 1 | 13000000 | 7000000 |
| 2 | 10000000 | 5000000 |

բ) Գնանշման հարցման հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցե | |
|---|---|---|---|
| | | էլեկտրոնային | Գրանցման |
| 1 | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | info@nuaca.am | ք. Երևան, Տերյան 105 |

գ) Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

դ) Մասնակցի կողմից առաջարկած գինը հետևյալն է.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնի առաջարկը ըստ չափաբաժինների (ՀՀ դրամ) | |
|---|---|---|---|
| | | I չափաբաժին | II չափաբաժին |
| 3 | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | 10700000 /առանց ԱԱՀ-ի/ | 8200000 /առանց ԱԱՀ-ի/ |
| | | 2140000 / ԱԱՀ/ | 1640000 / ԱԱՀ/ |
| | | 12840000 /Ընդհանուր գինը/ | 9840000 /Ընդհանուր գինը/ |

2.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | Բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

## 3. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Հովսեփյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին և երկրորդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցին.

- Առաջին և երկրորդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

## 4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրածմասնակցին ծանուցելու մասին

(Ա. Հովսեփյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,
- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

## 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման <u>օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

(Մ. Քյուրքյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հոկտեմբերի 25-ին, ժամը՝ 14:30-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է, դրանում՝ կողմ -4, դեմ- 0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Հովսեփյան |
| Անդամ | Օ. Կարապետյան |
| | Գ. Խաչատրյան |
| | Ա. Չավուշյան |
| Քարտուղար | Հ. Ավետիսյան |